ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ 187 գ. Ծովասար

«29» 09 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ այն մասին, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը 2021 թվականի սեպտեմբերի 28-ի N 4 նիստում որոշում է ընդունել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու և մրցույթի օր նշանակելու մասին:

Կից ներկայացնում եմ խորհրդի որոշման քաղվածքը և հայտարարության պատճենը:

Հարգանքներով

խորհրդի նախագահ՝ Ռ. Մանասյան

ՈՐՈՇՄԱՆ ՔԱՂՎԱԾՔ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 28-ին կայացած N4 նիստի

արձանագրությունից

Օրակարգում

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Զեկուցող. խորհրդի նախագահ՝ Ռ.Մանասյան

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի № 1392-Ն որոշման № 3 հավելվածի 51-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի № 319 որոշմամբ հաստատված, ինչպես նաև 2011 թվականի օգոստոսի 25-ի № 1221-Ն որոշմամբ փոփոխված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերի պահանջները

Խորհուրդը որոշում է՝

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2021թվականի սեպտեմբերի 29-ից հայտարարել մրցույթ:
2. Հաստատել կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու համար հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել www.azdarar.am կայքում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի № 174-Ն որոշմամբ սահմանված կարգով:
4. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայտերի ընդունումն ավարտվում է մրցույթի անցկացնելու օրվանից 10 աշխատանքային օր առաջ:
5. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների (փաստաթղթերի) ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի անդամ Գ.Ստեփանյանի վրա:
6. Մրցույթն անցկացնել կազմակերպության շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2021 թվականի նոյեմբերի 2-ին ժամը 14:00-ին:
7. Հանձնարարել խորհրդի նախագահ Ռ.Մանասյանին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճեն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 29-ը պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին և կրթության և գիտության նախարարություն հոկտեմբերի 1-ին:

Խորհրդի նախագահ՝ Ռ.Մանասյան

Մրցույթ ՀՀ Գեղարքունիքի մարզի,,Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց,,ՊՈԱԿ-ի տնօրենիթափուր պաշտոնը զբաղեցնելու համար
29-09-2021թ.
Տիպ՝Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնիթափուր պաշտոններ
Հայտատու՝ՀՀ Գեղարքունիքի մարզի,,Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջն. դպրոց,, ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ
ՀՀ Կառավարության2010թ. մարտի 4-ի 319-ն որոշում

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար, որի համար պարտադիր պայմաններ են:

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձարագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/

Մրցույթիմասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը,
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
5. Ինքնակենսագրություն

Փաստաթղթերը ընդունվում են 2021 թ. սեպտեմբերի 29-ից մինչև 2021 թ. հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ-ի նոյեմբերի 2-ին ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Ծովասար 1-ին փողոց,շենք 11:

Հեռ.՝094309036
Էլ.փոստ՝tsovasar@schools.am